

3584

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՆՖԱԿԻՆ ԿԻՑ
ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲՅՈՒՐՈ

Ձեռագրի իրավունքով

ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԿՈՒՐՍ I

1930

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 5.

Գ. ԵԴԵԼՅԱՆ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԸՄԲՈՆՈՒՄՆ.

II. ՄՏԱՊԱՏԿԵՐ.

- ա) Ըմբռնման և մտապատկերի համեմատությունը.
- բ) Մտապատկերային տիպեր.
- գ) Մտապատկերային տիպի փոխանցումը:

III. ՎԵՐՀԻՇՆԵԼ—ՃԱՆԱԶՆԵԼ.

- ա) Ծանոթության զգացման բացատրությունը.
- բ) Ամենզիա և պարամենզիա.
- գ) Տարբերել:

IV. ՅԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.

1. Յերևակայության մտապատկերի առանձնահատկությունները.
2. Ռեպրոդուկտիվ յերևակայություն.
3. Պրոդուկտիվ—կոնստրուկտիվ յերևակայություն.
4. Ակտիվ յերևակայություն.
5. Պասսիվ յերևակայություն.
6. Յերևակայության զարգացումը և արժեքը:

Գրականություն.

ЛАЗУРСКИЙ: Психология 4-й кн. XIII.



ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՍՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

I. ԸՄԲՈՆՈՒՄՆ.

Ըմբռնման յերեվույթը քննելիս տեսանք, վոր ըմբռնումը նոր է հին (ոեպրոդուկտիվ) ելեմենտների սինթեզ է, այսինքն մի նոր առարկա ըմբռնելիս մտապատկերային (հին) տարրերը զուգորդվում են նոր տպավորությունների հետ: Հին ու նոր տարրերը չեն ջոկվում, առանձնանում իրարից, այլ շատ սերտ կերպով միանում և մի ամբողջություն են առնում: այսպիսի միացումը կոչվում է ասսիմիլացիա: Ասսիմիլացիան ասոցիացիայի (զուգորդման) պրոցես է այն տարրերու թյայածր, վոր ասոցիացիայի ոգակներն իրարից ջոկ, ինքնուրույն են գիտակցվում, զգացվում են, վոր նախ տեղի յե ունենում մի ոգակը և հետո՝ մյուսը, այն ինչ ըմբռնման ասսիմիլացիայի ժամանակ տարրերը ջոկ չեն գիտակցվում, այլ ձուլված մի ամբողջություն են տալիս: Ուրեմն ըմբռնման ժամանակ նշանակալից դեր ունի հիշողությունը—ոեպրոդուկտիվն և միաձույլ ասոցիացիան:

II. ՄՏԱՊԱՏԿԵՐ.

Մարդ կարող է ապրել այնպիսի վիճակ, վորի բովանդակությունը նման է ըմբռնմանը և այն ել այն դեպքում, յերբ այդ ժամանակ բացակայում է ըմբռնման գրգռատճառ ֆիզիքական արտաքին գրգռը:

Գիտակցութեան մեջ արթնացող այն պատկերը, վորն էր բովանդակութեան ընդհանուր գծերով նման է ըմբռնման, բայց անմիջապես չի արթնանում արտաքին գրգռից. կոչվում է մտապատկեր: Սկզբնական, նոր կազմվող մտապատկերներն ըմբռնումների հետևանքն են, որանց պատճենը, մտապատկերը նման է իր բովանդակութեամբ վորեւ ըմբռնման, բայց նա կարող է կազմվել մի քանի ըմբռնումների մասերից, ինչպես և իրականությունից յեղրակացված մտապատկերներից կարող են կազմվել նոր մտապատկերներ, վորոնք ելի, անուղղակի կերպով, իրականության վերամշակված ձևերն են:

Իրականից անմիջապես առնված մտապատկերը կարող է իրեն համապատասխանող ըմբռնումի ապրումից ամիսներ կամ տարիներ հետո արթնանալ գիտակցության մեջ, բայց կարող է արթնանալ նաև ըմբռնման գրգռն անմիջապես վերանալուց հետո, որ. էլեքտրական լամպային յերկար նայելուց հետո, յերբ լամպի յույսը հանդնում ենք, մեր աչքի առաջ, մութի մեջ, յերևում է լամպը մոտամբ մտապատկերի, մասամբ ըմբռնման նման, բայց թուլացած զգայական տպավորութեամբ: Նույն յերեվույթը նկատվում է նաև լսողության ժամանակ:

Վարովհետեւ մտապատկերները ըմբռնումներից են առաջանում ուղղակի կամ անուղղակի կերպով և բովանդակութեամբ նման են նրանց, այդ պատճառով ել մտապատկերներն այնպիսի խմբակցութեան են բաժանվում, ինչպիսին հատուկ է ըմբռնմանը (լսողական, տեսողական, շարժման և այլ մտապատկերներ):

Ըմբռնումը և մտապատկերը թեև իրար նման են, բայց և ոչնեւ պարզ տարբերութեան:

1. Ըմբռնումը տարբերվում է մտապատկերից իր ինտենսիվութեամբ (ուժով), մատի կրակից այրվելը և դրա հիշողական մտապատկերը, թնդանոթի ձայնը և նրա մտապատկերը, կատարած թուխթը և նրա մտապատկերը, նույն ուժը չունեն:

2. Ըմբռնումն իր բովանդակութեամբ ավելի մանրամասն է, հարուստ, պայծառ, այն ինչ մտապատկերն իր բովանդակութեամբ ավելի թերի յե, պակասավոր և գունատ:

Սա ընդհանրապես ճիշտ է, բայց լինում են դեպքեր, յերբ մտապատկերը համարյա ըմբռնման պայծառութեան ունի (որ. արտակարգ յավ հիշողութեան տեղ մարդիկ), մտապատկերն ավելի պայծառ ու մանրամասն բովանդակութեամբ կարող է լինել, յեթե այդ համեմատելու լինենք մի այլ տեսակի, բայց անուշադիր կամ աննպաստ պայմաններում տեղի ունեցած ըմբռնման հետ, որինակ, կիսախափարի մեջ տեսած առարկայի ըմբռնումն ավելի քիչ պայծառութեան ունի, քան մի կենդանի և վառ կերպով պատկերացրած մտապատկեր: Ըմբռնումը և մտապատկերն իրենց պայծառութեամբ տարբերվում են այն դեպքում, յերբ մի վորոշ ըմբռնում համեմատում ենք նույն այդ ըմբռնման մտապատկերի հետ:

3. Ըմբռնումն ավելի կայուն է, քիչ փոփոխական: տեսում է այնքան ժամանակ, վորքան ժամանակ ֆիզիքական գրգռը հասնում է յգայարանին, նա առաջանում և տեսում է ըմբռնողի կամ քիչ, ցանկութեանից անկախ: Մտապատկերն արագ հոսող, փոփոխական է, փոփոխվելով արագ հանգչում է գիտակցության մեջ: Ասվում է նաև, վոր մտապատկերի առաջացումը և փոփոխվելը յենթակա յե գիտակցողի կամ քիչ, ցանկութեան:

Ըմբռնման և մտապատկերի մեջ այսպիսի տարբերություն անկասկած գոյություն ունի, բայց չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, վոր մտապատկերը կարող է արթնանալ նաև մարդու ցանկությունից անկախ (հիշել պերսեվերացիայի յերեվույթը), կարող է մտքի մեջ յերբեմն բովանդակին յերկար, համարյա առանց նկատելի փոփոխութեան մնալ: Բացի այդ, փորձերը ցույց են տվել, վոր հաճախ մարդ չի

կարողանում էր մտապատկերներն ըստ իր ցանկության կամ փորձ կատարողի պահանջների համաձայն փոփոխել և յեթե ուզում է փոփոխել մտապատկերը դառնում է մութը—խավար և քայքայվում է :

Ավելի էյական են հետեյալ տարրերությունները :

4. Ըմբռնումն առաջանում է արտաքին, նոր զրդիւններից, իսկ մտապատկերը հին, ցերքին կենսութեան գրգռներից :

5. Ըմբռնումը մարմնական է, դուրսն առարկայացած է գիտակցվում, իբրեւ յեսից դուրս առարկայական պատկերացում, իսկ մտապատկերը ներքին—սուբյեկտիվ վիճակ է, առանց արտաքին կենդանի առարկայացման :

Այս ասածները հնարավորություն են տալիս յեզրակացնելու, փար մտապատկերն ըմբռնման պարզ վերակրկնությունը չէ, այլ նոր մի նոր պրոցեսի արդյունք է, հոգեկան մի նոր յերեվութ, վոր մի կողմից նման է ըմբռնմանը, իսկ շատ հիմնական կողմերով էլ տարբեր է նրանից :

Ինչպես ըմբռնումը զանազան զգայությունների աստիճիլացիայի կոմպլեքս է, այնպես է նրանից ծագող մտապատկերը մտապատկերային զանազան տարրերի աստիճիլացիայի, կոմպլեքս է : Որ. «զանգ» մտապատկերը կազմված է մտապատկերային հետեյալ տարրերից. ա) զանգի տեսողութեան մտապատկեր, բ) զանգի ձայնի պատկերացումն, գ) զանգի շողափնիքի, ծանրութեան, սառնութեան զգայությունների պատկերացումն, դ) «զանգ» բառի նշանաւորման է բառն արտասանելու շարժումների պատկերացումներ և այլն : Այս տարրերը նախ իրար հետ աստիճիլաւոր կապերի մէջ են, բոլոր տարրերը նույն պարզութեամբ չեն գիտակցվում, այս կամ այն անգամ այդ մտապատկերն ունենալիս այս կամ այն տարրն է ավելի շեշտված արտահայտվում : Ընդհանրապես բոլոր տարրերը միասին չեն արթնանում, վորոչ մասերը բացակայում են այս կամ այն անգամ պատկերացնելիս :

Յեթե ի նկատի ունենանք անհատական հանգամանքը, կտեսնենք, վոր նոր հոգեբանությունն այս խնդրում վերջնականապես յեկել է այն յեզրակացութեան, վոր մտապատկերելու խնդրում անհատներին զտնդան տիպերի կարելի չէ բաժանել : Ամեն մի տիպ մտապատկերելիս գիտաբանություն է տալիս այս կամ այն տեսակի մտապատկերներին :

Ա) Տեսողական տիպ. Սա լավ հիշում է պատկերացումն և տեսողական պատկերները. լավ է հիշում մարդկանց և առարկաների արտաքինը—ձևերն ու գույները. պարզ պատկերացումն է կարգացած գրքի յերեսները, նույնիսկ տողերը, յերգի տպված կամ գրված նոստաները, այս տիպի ճառախոսն իր գրած ճառի թերթերի յերեսներն է հի-

շում, կարծես մաքուր կարգում է իր գրածը, թվերով գործողություններ կատարելիս գրված կամ տպված թվեր է պատկերացնում, նույնիսկ պատասխանի թվերն է պատկերացնում մտավորապես : Այս տիպի մի մարդ պարզ պատկերացումն է իր սենյակը և նախաճաշի սեղանն իր մանրամասնութեամբ—առարկաները, նրանց տեղերը, ձևերը, գույները, քանակը և այլն, կարծես նա ներքնապես, մաքուր տեսնում է իրականությունը : Վատ տեսողական տիպի մի մարդ իր սենյակի և նախաճաշի պատկերացման փորձի մասին գրում է. «Վորոչ մի պատկերացում չունեմ արդ մասին. ամեն ինչ անորոշ է, վորինչ պարզ պատկերացնել չեմ կարող. չեմ կարող թվել աթոռները, վոր մի բան մանրամասնութեամբ չեմ պատկերացնում, մի ընդհանուր միատեսակ անորոշ գույն եմ պատկերացնում» :

Տեսողական պատկերներ հիշելու թուլությունը կամ համարյա թե բացակայությունը չի խանգարում, վոր մարդ մտածել կարողանա, գրանց տեղը բռնում են բառերը :

Բ) Լսողական տիպ. Սա ավելի հազվագյուտ տիպ է. ավելի պարզ է պատկերացումն ձայնային բովանդակությունները. կարգացածը հիշելիս՝ պատկերացումն է բառերի անունները (ձայնաւորներ), մասվոր հաշիվ անելիս կրկնում է մաքուր թվերի անունները, զրոյցակցի խոսակցությունը հիշելիս՝ վոր միայն նրա արտասանած բառերն է հիշում, այլ կարծես լսում է նաև նրա ձայնը. կարծես այս տիպը «մտածում է ականջով» : Մի գրամատուրդ գրում է իր ծանոթ այլ գրամատուրդի. «Յերբ յես մի բան եմ գրում, յես լսում եմ, իսկ դուք տեսնում եք : Ամեն մի նախադասություն գրելիս, համադասարան անձների խոսելու ձայնը հասնում է իմ ականջին, իսկ դուք ձեր գործող անձանց տեսնում եք բեմի վրա այս ու այն կողմ գնալիս ու շարժումների անելիս : Յես լսող եմ, դուք՝ տեսող» : Ընկերը նրան պատասխանում է. «Լիապես արդար եք, գիտե՞ք յես ուր եմ գտնվում, յերբ մի գրամա յեմ գրում. պարտերում» :

Գ) Շարժողական (մոտորական) տիպ. Այս տիպը վերհիշելիս, դատելիս, մտավոր աշխատանք կատարելիս, գլխավորապես ոգտվում է այն մտապատկերներից, վորոնք առաջացել են շարժումներից : Նրա համար առանձնապես կարևոր նշանակություն ունեն այն շարժումները, վորոնք կապված են բառերի արտասանութեան հետ. իր լսածը և կարգացածը հիշելիս մաքուր արտասանում է այդ բառերը : Այս տիպի աշակերտը դասը սովորելիս բարձր է կարգում վոր միայն լսելու, այլ գրել. փավորապես բառերի արտասանութեան շարժումները զգայու համար : Այս տիպին պատկանող մի պրոֆեսոր իր մասին գրում է, վոր ինքը մը-

տածելիս չի տեսնում կամ լսում, այլ «յես մտքումս խոսում եմ, իմ ներքին խոսելը լինում է այնքան կենդանի, վոր յերեմե՞ն բառեր եմ արտասանում» թելադրված իմ ներքին—մտավոր խոսելուց»:

Այս տիպի վիճենացի մի մարդ իր մասին հայտնում է, վոր յերբ հիշում է իր մարմնի շարժումները, իր մարմնի այն մասերում մկանս—յին զգացողություններ է զգում, ինչպիսին զգացվում են անցյալում այդ շարժումները կատարելիս: Քայլող զինվորին պատկերացնելիս, կարծես թե ինքն էլ է զինվորի հետ յետ ու առաջ շարժվում, հենց վոր աշխատում է ճնշել իր վոտքերի շարժման զգայությունները և իր ուշա—դրությունը կենտրոնացնել զինվորի պատկերի վրա, պատկերը խելա—թյունովում է: Խոսելու շարժումները նրա կյանքում հսկայական դեր ունեն, յերբ նա ուզում է իր դիտողությունները նկարագրել, գործ է ածում այն բառերը, վորոնք առարկաների դիտողության մանրամաս—նությունների հետ զուգորդված են, վորովհետև դիտելիս նա ամեն բան բառերի յե վերածում, բառերի հետ է կապում, այլ խոսքով ա—սած, դիտողությունը նրա համար մի ներքին լուս խոսել է: Շարժողա—կան մաքուր տիպը բառի ձայնային կողմը չի հիշում, այլ արտաա—նության շարժումները:

Շարժման տիպին մոտ է շոշափման տիպը, վորի կյանքում շոշա—փելիքի զգայությունների մտապատկերները հսկայական դեր ունեն. այս ուղղությամբ նրազգացները կարող են մաշկի զգայություններ ստանալ նույնիսկ ուրիշներին նայելիս. որինակ, մեկը վոր տեսնում է իր յերեխայի մատը դուռն տակը ընկած, իր համապատասխան մատի մեջ ուժեղ զուլ է զգում, վորը տեսնում է մեծ մասամբ շարժողական և շոշափելիքի զգայությունների մտապատկերային ելեմենտներից:

Մաքուր մտապատկերային այս տիպերը յենթաստորաբաժանում—ներ էլ ունին, որինակ, տեսողական տիպը կարող է լինել առարկայա—կան—տեսողական, յերբ ցայտուն է պատկերացնում առարկաներին վե—րաբերվող մտապատկերները և բառային—տեսողական, յերբ լավ է հի—շում տպված կամ գրված բառերի պատկերները:

Լսողական տիպը կարող է լինել հնչական, յերբ բառերի ձայնա—թմբերն է հիշում, ինչպես հնչաշարժողական, յերբ լավ է հիշում բա—ռերի ձայնաթմբերը և այդ բառերի արտասանության շարժումները:

Կան նաև մտապատկերային միջանկյալ տիպեր՝ լսողատեսողական, լսողաշարժողական և տեսողաշարժողական:

Ավելի սովորական է խառը կամ բնդիաճուր տիպը, վորի մոտ մտա—պատկերների այս կամ այն տեսակը հատուկ շեշտվածությամբ չի ար—տահայտվում, այլ համարյա համաստրապես ոգտվում է բոլոր տեսու—

կի մտապատկերներից և յեթե այս կամ այն տեսակի մտապատկերներն ավելի յեն շեշտվում, բայց վոր այնքան ցայտուն, վոր հնարավոր լինի այդ անձին հատուկ տիպի կարգին դասելու: Սովորորաբար մաքուր մե—տապատկերային տիպերը կյանքում քիչ են պատահում: Պետք է ի նկա—տի ունենալ նաև այն, վոր յեթե ասվում է, վոր մեկը տեսողական կամ լսողական տիպի յե, այդ չի նշանակում, վոր տեսողական տիպն այլ տեսակի մտապատկերներից չի ոգտվում, նա ունի ամեն տեսակի մտա—պատկերներ, բայց ծայրահեղ միակողմանիությամբ ոգտագործվում են միայն վորոշ տեսակի մտապատկերներ:

Մտապատկերային տիպերի առանձնահատկությամբ պատմաբար եռափ ստեղծի բնածին բնդիաճուրային է և ապա փորձը—վարժությունը: Յեթե մեկը բնականից, որինակ, տեսողական տիպի յե, նրան չի կարե—լի վարժեցման միջոցով տեսողական ցայտուն տիպ դարձնել, թեև հնարավոր է վորոշ շափով շտկել այդ թերին և մասամբ դարգացնել այդ կողմը: Կրթության միջոցով մարդուն կարելի յե մոտենցնել խառը տիպին:

Յերբեմե բնական ձևով, հիվանդության և կյանքի փորձի շնորհիվ մեկը մի տիպից կարող է մի այլ տիպի փոխվել: Այս տեսակետից հե—տաքրքրական է բժիշկ Շարկոյի նկարագրած հիվանդը: Մա մի դուռ տեսողական տիպի անձնավորություն էր: Հիվանդությունից հետո կորցնում է տեսողական պարզ մտապատկերներ արթնացնելու կարո—ղությունը, իրենց քաղաքից հեռանալուց հետո, յերբ վերադառնում էր, ամեն բան նրան նոր եր թվում, նրան թվում էր, թե առաջին ան—գամն է այս քաղաքը տեսնում, յերբ նրան առաջարկվում էր նկարա—գրել իրենց քաղաքի գլխավոր հրապարակը, նա պատասխանում էր. «Յես գիտեմ, վոր հրապարակ գոյություն ունի, բայց յես անկարող եմ պատկերացնել այն և այդ մասին վոչինչ չեմ կարող ասել»: Նույն—իսկ իր կինը և յերեխաները նրան ոտար էյին թվում. իր դեմքը հայե—լում տեսնելով յենթադրում էր, վոր ոտար մարդու դեմք է: Կարիքից ստիպված այս մարդն սկսում է ոգտագործել լսողական մտապատկեր—ները: Թվերը գումարելիս սկսում է բարձր արտասանել: Այն բառերն ու մտքերը, ինչ հիշում է, նրան թվում է, թե հնչվում են ականջում, վորը նրա վրա սկզբում տարորինակ տպավորություն է թողնում: Մի բան անգիր անելու համար պետք է մի քանի անգամ բարձր կարգար, վոր ականջը լսի: Սա մի լավ որինակ է, թե ինչպես մի տիպը կարող է հանդամանքների ազդեցության տակ այլ տիպի փոխվել:

Բոլոր ասածները բերում են մեկ այն յեզրակացության, վոր մոտա—պատկերները հիշողության և ատոցիացիայի արդյունք են. պետք է

նախ լինի ըմբռնումն, փորի գրգիռը պետք է հետք թողնի ուղեղի մեջ, փորից հետո այդ հետքը ներքին կամ արտաքին գրգիռների ազդեցությամբ տակ պետք է ունենալ հետադարձ (վերադարձ) յենթարկվի, իսկ դրա համար էլ անհրաժեշտ է, փոր նոր գրգիռը զուգորդվի հետ հին հետքերն էլ պետք է իրար հետ զուգորդված լինեն, փոր մի մտապատկերից հետո արթնանա մի ուրիշ մտապատկեր:

Կան մտապատկերներ, փորոնք անցյալ ըմբռնումների խակախան պատճեններն են և նրանց գիտակցելիս ունենք նաև այն համոզումը, փոր դրոնք ապրվել են մեզից անցյալում: Կան նաև նոր կազմվող կամ հին մտապատկերներ, փորոնք այդպես չեն գիտակցվում: Այժմ կրոնական առաջին տեսակի մտապատկերների մասին:

III. ՎԵՐՀԻՇԵԼ—ՃԱՆԱԶԵԼ.

Մտապատկերների մի մասը գիտակցում ենք իբրև մեր անցյալում ապրված իրողություն: Անցյալը գիտակցվում է պայմանական նշաններով—թվերով և անուններով, որինակ, 1900 թ., 1905 թ., անցյալ որը, մի շարաթ, մի տարի առաջ. կամ անցյալը մի անցքի հետ ենք կապում. որինակ, Յերեվանում ջրմուղ շինելու տարին, դպրոցը շինելու տարին և այլն: Այսպիսով գիտակցվում է մտապատկերը նրան կապակցված թվի կամ դեպքի հետ: Այս վիճակը կոչվում է վերի-շումն:

Վերհիշումը լիակատար է լինում այն ժամանակ, յերբ մտապատկերի հետ կապակցում ենք և՛ թիվը, և՛ նույն ժամանակի դեպքը: Վերհիշումը փաստ անցյալ ժամանակին վերադրել, նշանակում է վերադառնալ այդ փաստին իր քվակամի և քվակամ անցքերի հետ կապակցված (զուգորդված): Ուրեմն դա մի բարդ աստղագիտական պրոցես է: Բացի այդ, դրա մեջ կա նաև այն գիտակցությունը, փոր դա իմ անցյալին է վերաբերում, յես իմ անցյալում ապրել և ներկայումս ապրում եմ այդ նույն փաստը:

Այս նույնը կարելի չէ ասել նաև մի առարկայի ըմբռնման մասին, յերբ գիտակցում ենք, փոր այդ առարկան ապրել ենք անցյալի այս ինչ ժամանակում: Սովորաբար առարկաներն այս ձևով ըմբռնելու անփունում ենք համաշումն:

Տեսնում եմ մի տուն, գիտակցում եմ, փոր սա ճիշտ և ճիշտ այն տունն է, փոր տեսել եմ անցյալում, որինակ, մի ամիս առաջ, նշանակում է ճանաչելի այդ տունը:

Տեսնում եմ մի այլ տուն, սրա մասին մտածում եմ, փոր դա այս ինչ ճարտարապետական փոփոխ շինված բնակությունն է, սա ևս

աստղագիտական պրոցես է, բայց ճանաչումն չէ, փորվհետև իմ անցյալ փորձի փորձը դեպքի կամ ժամանակի հետ չեն կապում, չեն գիտակցում, փոր այս տունն անցյալում մի անգամ էլ եմ տեսել: Այն վիճակը կոչվում է իմացալ, իմացություն, բայց վոչ ճանաչումն:

Ճանաչումը լինում է լրիվ և վոչ լրիվ: Որինակ, փորցում տեսնում եմ մի մարդու, փորի գեմքն ինձ ծանոթ է թվում, զգում եմ, փոր մի ինչ փոր տեղ և մի ինչ փոր ժամանակ տեսել եմ այդ մարդուն, բայց վերջապես չեմ կարող փորոշել. սա թեքի, վոչ լրիվ ճանաչումն է: Երբ ճանաչում է զուգորդումների շղթան իր վախճանական ողակին չի հասնել: Մի քիչ հետո հիշում եմ, փոր դրան այս ինչ կոոպերատիվ խանութում եմ տեսել ապրանք վաճառելիս մի շարաթ առաջ: Սա արդեն լրիվ ճանաչումն է:

Սովորական ըմբռնումից ճանաչումը տարբերվում է ծանոթությունից գիտակցությամբ կամ զգացումով, մեկ հիշում է ծանոթ ճայնն այլ կերպ, քան անձանոթը, ծանոթ ձևապիկրը, գեմքը յերեւում են մեկ այլ կերպ, քան անձանոթները:

Ճանաչումը և ծանոթությունից զգացումը պետք է բացատրել աստղագիտական յերեւույթով. ինչպես մեկ հայտնի յես, ըմբռնումը կազմված է հիշողական պատկերից և նոր ապավորություններից: Հիշողական պատկերին ասենք «Ա», փորն ունի $ա + բ + գ + դ + ե + չ$ հատկանիշները: Ըմբռնումն ևս ունի հատկանիշներ՝ $ա + բ + գ$, փորոնք նման են վերհիշվող մտապատկերին. այս նման տարրերն իրար հետ միանում, ձուլվում են, բայց նույն աստղագիտական հիմամբ նրան, այդ պրոցեսի մեջ, միանում են նաև մտապատկերի $դ + ե + չ$ տարրերը, փորոնք զուգորդված են արդեն միացած $ա + բ + գ$ տարրերի հետ: Հենց այս էլեմենտների միացմամբ ըմբռնումը մեկ ծանոթ է թվում և վերադրվում է մեր անցյալին, ինչպես այդ յերեւաց կոոպերատիվ խանութի ծառայողին տեսնելիս, յերբ այդ ըմբռնմանը միացավ կոոպերատիվ խանութը և մի շարաթ առաջ տեսած լինելը, այդ ըմբռնումը դարձավ ճանաչումն:

Այն դեպքում, յերբ առարկան մեկ ծանոթ է թվում, բայց չենք կարողանում անցյալ ժամանակի մի փորձ մոմենտի մեջ տեղափոխել, նշանակում է զուգորդման լրացուցիչ բոլոր մոմենտները չեն արթնացել, բայց նրանք յենթադիտակից չըջանից ազդում են անորոշ կերպով գիտակցության վրա և մեր մեջ արթնացնում ծանոթ լինելու զգացումը:

Այս կերպ կարելի չէ բացատրել ամենկիսայի և պարամենկիսայի յերեւույթները:

Ամենգիտն այն վիճակն է, յերբ մեկ ծանոթ առարկաները (չիրքը,

առանձին, ծանոթ մարդը և այլն) բոլորովին անծանոթ են թվում նորից տեսնելիս: Այս յերեկոյթը բացատրվում է նրանով, վոր ըմբռնման ժամանակ չեն արթնանում անցյալ փորձի այն մոմենտները, վորոնք պատճառ են դառնում նոր ըմբռնումն համարելու ծանոթ և անցյալ փորձի առարկա: Այստեղ տեղի չի ունենում հնի և նորի լիակատար սինթեզ:

Պարամնեզիայի ժամանակ հիվանդին թվում է, վոր այն ամենը, ինչ նա այժմ տեսնում է, իրեն ծանոթ են անցյալից, թեև ուռաջին անգամն է տեսնում. որինակ, նոր քաղաքի նոր բժիշկին ընդունում է իրեն արդեն ծանոթ յերեկոյթ: Ձեման այս յերեկոյթն այսպես է բացատրում: Նոր փաստն ըմբռնելիս մի քանի հանգամանքներ են արթնանում, վորոնք կապված են այդ փաստի հետ և նման են հին փաստի հանդամանքներին, իսկ այն հանգամանքները, վորով նոր փաստը տարբերվում է հին փաստից, կամ վորով հին փաստը տարբերվում է նորից, չեն արթնանում: Նորը հնից տարբերող երևմենտների բացակայութլանը պատճառ է դառնում, վոր ներկա նոր ըմբռնումը թվում է անցյալում ըմբռնված մի բան (հին, ծանոթ բան):

Տարբերման խնդիրը նույն կերպ է բացատրվում: Տեսնում եմ մեկին, վորն ինձ ծանոթ է թվում, նույն ժամանակ վերհիշում եմ այն ծանոթին, վորին նա նման է թվում: Աստիճանաբար նկատում եմ, վոր տվյալ մարդը տարբերվում է իմ այն հին ծանոթից իր մաղերի գույնով, յերկարավուն գեմքով և այլն: Այսպիսով տարբերութլան պրոցեսը վերածվում է նրան, վոր մի քանի աստղյապի շարանութլունների կողքին առաջանում են տարբեր հատկանիշների աստղյապիներ, վորոնք նման չեն տվյալ նոր ըմբռնմանը:

IV. ՅԵՐԵՎԱՆԱՅԻՆ ԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՅԵՐԵՎԱՆԱՅԻՆ ԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՏԱՊԱՏԿԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

ա) Ամեն մի մտապատկերի արթնացման հետ չի կապված այն գիտակցութլունը, վոր նա ապրվել է մեկնից անցյալում այս կամ այն ինչ տեղը, այս կամ այն ինչ զեպքում: Շատ մտապատկերներ, վորոնք անցյալում յեզել են այս կամ այն ըմբռնման պատճեն, հետագայում վերարտադրվում են առանց միանալու անցյալում ապրված լինելու և ներկայում վերհիշվելու գիտակցութլան հետ, այդ տեսակ մտապատկերները, մի տեսակ կարված են ժամանակից և տարածութլունից, այ-

սինքն՝ նրանք չեն կապվում վորոշ ժամանակի, վորոշ տեղի ու զեպքի հետ: ր) Ինչպես և անցյալ փորձի երևմենտներից կապված մի նոր մտապատկեր կարող է կապված չլինել իմ անցյալ փորձի այս կամ այն մոմենտի հետ. որինակ այժմ կարող եմ իմ մեջ արթնացնել ծառի մի մտապատկեր իր առարկայական մանրամասնութլուններով, ի հարկե, ոգտվելով իմ անցյալ փորձից, բայց այդ մտապատկերը վերհիշողութլուն չե, նրա հետ չի կապված ծանոթութլան զգացմունքը: Դրա համար առ այժմ, ընդհանուր ձևով, կարող ենք ասել, վոր յերեկոյթութլան մտապատկերը վերհիշողութլուն չե՝ տեղավորված մեր անցյալ փորձի մտերիմալի ժամանակի մեջ գաղափարված մոմենտներից մեկում:

Յերեկոյթլան մտապատկերը վերհիշված, վերստին ճանաչված մտապատկեր չե, բայց նա արդյունք է հիշողութլան, անցյալ փորձի:

Յերը մեկը կարող է մի ճանապարհորդութլան մասին, իր մեջ արթնացնում է զանազան մտապատկերներ կարգացածը հասկանալու համար, այդ մտապատկերները նա անցյալում ապրել է՝ կարգալով այլ գրքեր, լսելով ուրիշներից, տեսած լինելով այս կամ այն առարկաները, ուրեմն կարգացածի մասին յերեկոյթլան պատկերներ կաղմելը արդյունք է անցյալ փորձի, միայն թե անցյալ փորձի մատերիալները վերարտադրելիս չի գիտակցում, չի հիշում, թե այդ ապրումներն անցյալում յերը և վորտեղ է գիտակցել: Այդ գիշը կարգալիս, սակայն, լինում են մոմենտներ, յերը կարգացողն այնպիսի մտապատկերներ ել է վերարտադրում վորոնց մասին հաստատապես գիտի, թե յերը և ինչ պայմաններում է ապրել, որինակ, տեսել է կինոյում, տեսել է իրենց գյուղի մոտի անտառում և այլն: Ուրեմն յերեկոյթլան աշխատանքի ժամանակ հաճախ իրար հետ են հյուսվում վորոշակի անցյալի (տեղի և ժամանակի) հետ կապված և վորոշ տեղի ու ժամանակի հետ չկապված մտապատկերներ:

Յերեկոյթլան մտապատկերի մի այլ առանձնահատկութլունն է կաղմում նորութլուն պարունակելու հանգամանքը. յեթե իմ մեջ մի մտապատկեր է արթնանում, վորն անցյալի հետ չի կապված, բայց նման է իրական մի առարկայի, որինակ, մի ծառի մտապատկեր, վորը կապված չե այս կամ այն վորոշ ծառի հետ, բայց իր ընդհանուր կառուցվածքով նման է ծառին, այսպես թե այնպես, իրենից մի նորութլուն է ներկայացնում, սա մի նոր բան է, քան մեր բաղում յեղող ծառի մտապատկերը, վորը կապված է վորոշ—ուեալ տարածութլան հետ և անհատական այնպիսի հատկանիշներ ունի, վորոնք հատուկ են

այդ ծառին միայն: Յերեակայության մտապատկերը զբերված լինելով անհատական հանգամանքներից (վորոշ տեղ, ժամանակ, վորոշ առարկայի հատկանիշներ) թողնում է նոր ապրում լինելու տպավորությունը: Յերեակայությամբ ստեղծված նոր մտապատկերները (զյուտեր, նոր տեսություններ, դեկարվեստական նոր ստեղծագործություններ) չափավոր մեծ չափերով են նորության տպավորություն թողնում:

Իրականության հետ ունեցած հարաբերությունը և զիտակցողի կողմից կատարած ներքին աշխատանքների տեսակետից յերեակայության մտապատկերները լինում են՝ օկսպոզուկով (վերարտադրական) և պրոդուկտով (ստեղծագործական):

2. ՌԵՊՐԵԶԵՆՏԱԿԱՆ ՅԵՐԵԱԿԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ.

Այս տեսակ յերեակայության մտապատկերներն ավելի մոտ են իրականության, նորության հանգամանքը թույլ է չեղված, գիտակցողը հատուկ ստեղծագործական մոմենտ չի մտցնում մտապատկերի կառուցման մեջ: Ա) Ռեպրոդուկտով յերեակայության ամենակրկնական, ամենաանդադրադադար ձևի դործունեությունն արդյունքն է կազմում այն մտապատկերը, վորն անցյալի սի վորոշ քմբռնման պատկերն են, բայց այժմ այդ մտապատկերը վերարտադրվելիս՝ վերարտադրողը չի զիտակցում, վոր դա իր նախկին փորձի մի վորոշ մոմենտի պարզ կրկնություն է, նրա մեջ մնացել է մտապատկերը, բայց մոտացվել են նրա հետ յեղած դուգորդումները (տեղը, ժամանակը, դեպքը) այժմ մնացել է այս բոլորից մերկացած մտապատկերը: Մեր առօրյա յերեվակայության մտապատկերների ահագին մեծամասնությունն այս կարգին է պատկանում: Այս դեպքում վոչ թե իսկական նորություն գոյություն ունի, այլ նորությունն այն է, վոր հին լինելու գիտակցությունը բացակայում է:

Բ) Ավելի նոր են օկսպոզուկով յերեակայության այն մտապատկերները, վորոնք նոր են կառուցվում, բայց նման են իրականության. որ. մտքում արթնացել է հենց այն մի ծառի, մի տան, մի այգու մրտապատկերը, վորն առօրյա նման առարկաներից առանձնապես չի տարբերվում, բայց և այնպես չի կարող նույնանալ իրականության մեջ գոյություն ունեցող այդ առարկաների այս կամ այն կոնկրետ որինակի հետ:

Գ) Ռեպրոդուկտով յերեակայության ավելի դարգացած տեսակն են կազմում այն մտապատկերները, վորոնք ուրիշների ազդեցության տակ նորից յուրատեսակ ձևով վերակառուցվում են այս կամ այն ան-

հատի կողմից. որինակ, մեկը մի գիրք է կարգում, մի նկարագիր է յսում և իր փորձի հիման վրա յերեակայության մտապատկերներ է կառուցում իր մեջ: Այստեղ արդեն զգալի չափերով նորություն և ակտիվ ուշադրություն գոյություն ունեն:

Ռեպրոդուկտով յերեակայություն է նաև այն դեպքում, յերբ մեկը յերեակայության մի նոր պատկեր է ստեղծում և տպագրում նորից պատկերացնում այդ ստեղծագործածը, այս յերեվակայութի մասում գաղտնի է վերհիշողություն:

3. ՊՐՈԴՈԻԿՏԻՎ—ԿՈՆՍՏՐՈԻԿՏԻՎ ԿՍՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՅԵՐԵՎԱԿԱՆՅՈՒԹՅՈՒՆ.

Այս տեսակ յերեակայության ժամանակ հին փորձի բովանդակություններն զգալի փոփոխությունների յեն յենթարկվում մի նոր, իրականությունը չկրկնող մտապատկեր ստեղծելու համար, այստեղ տարբերը հին են, իսկ նոր է կապակցությունը, ստեղծված ամբողջությունը: Ստեղծագործական յերեակայությունը հանդես է գալիս գեղարվեստների, գիտության, տեխնիկայի ասպարեզներում, ինչպես և առօրյա կյանքում: Առօրյա կյանքում տեղի ունեցող յերազանքները, ողային ամբողջներ կառուցելը, յերեխաների հերոսական եմոցիաներից առաջացող և իրականին չհամապատասխանող սուտը, կյանքի այս կամ այն դրությունը (ճակատամարտ, բանվորի ստորյերկրյա աշխատանք և այլն) վառ պատկերացնելու փորձերը, մի բան հիշելու ժամանակ ինքնուրույն պատկերներ ստեղծելը և այլն, ապացույցներ են կոնստրուկտիվ յերեակայության:

Տեխնիկայի ասպարիզում տեղի ունեցող գյուտերը, գեղարվեստի աշխատավորների նոր ստեղծագործությունները (չենք, յերգ, վեպ, նրկար, արձան և այլն), գիտության մեջ առաջացող նոր տեսությունները նույնպես ստեղծագործական յերեակայության արդյունք են:

Այնքան տարրինակ կարծիքներ կան ստեղծագործության (մանավանդ գեղարվեստական) մասին, վոր անհրաժեշտ է լուսաբանել այս խնդիրը թյուրիմացություններից խուսափելու համար:

Ընդհանրապես ընդունված է ստել, վոր մանավանդ գեղարվեստական ստեղծագործությունն արթնանում է հանկարծակի, անսպասելի, ստեղծագործողի կամքից անկախ: Պուշկինը բանաստեղծի մասին գրում է. «Հենց վոր աստվածային խոսքը միայն չվում է զգայուն ականջին, բանաստեղծը թափահարվում է, ինչպես արթնացած արծիվ»:

Ստեղծագործական պրոցեսի հանկարծակիությունը և կամքից ան-

կախ լինելն այնքան է բնորոշ, վոր հնում ստեղծագործությունը համարում էյին այն ջոկ հոգու գործը, վորը ժամանակավոր տեղավորվել է մարդու մեջ:

Այնուհետև թողնում են այս միտքը, բայց այն կարծիքն է դրա տեղը բռնում, թե ստեղծագործությունը մի այլ, ջոկ որինակարգության յենթակա յերևույթ է, քան հոգեկան մյուս յերևույթները և դրանից ել յեղնելով գալիս են այն մտքին, վոր հանճարեղ մարդիկ այլ են և նման չեն առորյա մարդկանց: Ներկայի տեսակետով ստեղծագործության պրոցեսը հոգեկան կյանքի մյուս յերևույթների սրինակարգությանն է յենթակա և բնական վերլուծության պետք է յենթարկել այդ յերեվույթը:

ա) Ստեղծագործությունը (մանավանդ գեղարվեստականը) սերտ կապված է աֆֆեկտիվ (ուժեղ զգացմունքներ) յերեվույթների հետ: Ստեղծագործողը կամ ընդհանրապես այդ աֆֆեկտների ազդեցության տակ է, կամ պերյոդիկ կերպով արթնացնող աֆֆեկտներ ունի, սրա զգացողությունն ընդհանրապես բարձր գրգռվածություն ունի, դրա համար ել ասվում է, վոր ստեղծագործությունը բարձր վոգեւորության ներկայութեամբ է լինում: Վերացական մտածողները, կոնկրետ փաստեր ուսումնասիրող գիտնականները լինում են ավելի սառը, հանգիստ և հավասարակշռված: Ստեղծագործական այդ աֆֆեկտների մեջ գրգռված է մոտորական, (չարժողական), գուրս արտահայտելու տենդենց:

բ) Ստեղծագործության ժամանակ նշանակալից մասնակցություն ունի յենթագիտակիցը, վորը պատճառ է դառնում հանկարծակի, կամքից անկախ բռնկումների:

Սակայն սխալ կլիներ յենթագրել, վոր այստեղ ամեն բան թողնված է յենթագիտակցին, յեթե լավ ուսումնասիրելու լինենք հայտնի արվեստագետներին ստեղծագործության պրոցեսները, կնկատենք, վոր մեկի մոտ զգալի, մյուսի մոտ ավելի քիչ զգալի ստեղծագործության բռնկված արտահայտությունը նախապատրաստված է այդ ստեղծագործողի անցյալ աշխատանքներով: Նախ ստեղծագործողի մեջ ստանդանում է մի մութ, անորոշ, պզտոր միտք—մտադրություն, վորն ստիճանաբար դառնում է աշխատանքի պարզ գիտակցված նպատակ: Այնուհետև նա սկսում է մատերիալ հավաքել այդ նպատակի իրագործման համար. մի վորոշ ժամանակ (յերկար կամ կարճ) այդ հավաքած մատերիալի մասերը դեռ բաժան-բաժան են, նրանց միացնելու գիտակից փորձերը դեռ պատահական և վոչ լրիվ բնույթ ունեն, բայց յենթագիտակից (անգիտակից) կերպով այդ մատերիալը մշակվում է և

այդ կերպ նախապատրաստվում է այն վերջնական սինթեսի, վոր պիտի կատարի ստեղծագործողը: Յեւ յերբ նախապատրաստությունը հասել է նշանակալից չափերի, այն ժամանակ մի պատահական ներքին կամ արտաքին ազդակ առաջացնում է այն վիճակը, վորը կոչվում է վոգեւորություն: Ներշնչումն, այս ժամանակ աչքի յե ընկնում հոգեկան բնդհանուր գրգռվածությունը, ուժերի մի զգալի յարումն, վորին հաջորդում է ստեղծագործության պրոցեսի վերջանալը:

Այս խնդրում անհատական անանհատականությունը մեծ դեր ունի, մեկի մոտ ավելի շեշտված է գիտակից, մյուսի մոտ անգիտակից պրոցեսը, մեկի մոտ նախապատրաստությունը կարճ է տևում, մյուսի մոտ շատ յերկար, մեկի մոտ ներշնչման մոմենտի արտաքին արտահայտություններն ուժեղ են, մյուսի մոտ՝ թույլ և այլն: Բայց ամեն մոմենտում յենթագիտակցին տալ գեղարվեստի, հիշատակի, վարժման և մանավանդ վերջնական սինթեսի ժամանակ պրոցեսը տեղի յե ունենում գիտակցության լրիվ մասնակցությամբ:

գ) Ստեղծագործության պրոցեսի ժամանակ տեղի յեն ունենում փիզիոլոգիական բավականին ուժեղ արտահայտություններ: Որինակ, նկատվում է արյան ուժեղ հոսանք դեպի գլուխը, սրտի բարախումն, վերջավորությունների մասամբ սառչումն, գրգռված չարժողականություն և այլն:

Այս յերեվույթները կապված են ուղեղի ուժեղ յարվածության և աֆֆեկտների հետ:

Հենց այս հանգամանքի հետ է կապվում տեխնիկ մարդկանցը հատուկ տարրինակությունները. Շիլլերը լավ էր աշխատում, յերբ դրա արտադանի վրա փթած խնձորներ էյին դրված լինում. Ռուսսոն հաճույքով էր մտածում, յերբ բաց գլուխն ամառային տաք արևի տակ էր լինում. այլ ստեղծագործողներ—սուրճ, գինի յեն խմում, ծխում են, գեղեր են ընդունում ստեղծագործելու ժամանակ և այլն:

Յերևակայությունը իրական մատերիալ փոփոխության է յենթարկում, նոր կապակցություններ է ստեղծում: Կոմբինատորական յերևակայության ժամանակ մտապատկերների փոփոխությունները հետևյալ ձևերով են տեղի ունենում:

ա) Մտապատկերների ամբողջական մասերը կցվում են իրար, որթեալոր ձի (ձիու և թռչունի թևերի կցումն), մարգածուկ (կեսը մարդ, կեսը ձուկ):

բ) Մի կոմպլեքսից վերացնում, անանհատացնում եւեւ մի կատար-

Այլ և փոխանցում մի այլ կոմպլեքսի (որինակ կապույտ ձի, սև մա-
ծուն) :

գ) Մտապատկերի բովանդակությունը սաստիկ մեծացնելով կամ
փոքրացնելով ստանում ենք մի վոչ սովորական մտապատկեր (որինակ,
հազար վերսա գնդակը հեռու ձգող մի վերստանող թնդանոթ. յերկու
վերջով բարձրություն ունեցող մեծ և փոքր մասիսներ և այլն) :

գ) Մտապատկերներն իրար ենք կցում ըստ նմանության և ստեղ-
ծում նոր պատկերացում (որ. անձրևի մարդարտյա կաթիլներ, արևը
ձառագայթները նմանեցնել նետերի, ջրվեժի պես թափվող մազեր և
այլն) :

յ) Մտապատկերների մի վորոշ կոմպլեքսից այս կամ այն պատկե-
րը մոռանալու հետևանքով, մի նոր պատկեր ենք գնում ամբողջությամբ
մեջ : Որինակ, իսպանական կյանքի մի տեսարանի մեջ մոռանալով տե-
ղական շորերը, այլ զգեստավորումով ենք պատկերացնում տեսարանը :

4. ԱՆՏԻՎ ՅԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.

Յերեակայության աշխատանքը, այլ ստորաբաժանման էլ կարելի
յե յենթարկել, յեթե հիմք վերցնելու լինենք անհատի ընդհանուր վի-
ճակը և վերաբերմունքը գեպի այդ աշխատանքը : Այս տեսակետից յե-
րեակայությունը լինում է ակտիվ և պասսիվ :

Յերեվակայությունն ակտիվ է կոչվում այն դեպքում, յերբ կամո-
վին, դրած նպատակի և գիտակցից կազմած ծրագրի համաձայն նախկին
փորձն փոփոխության և յենթարկվում մի նոր պատկերացում ստանա-
լու համար : Թե ուղարկուկտիվ և թե մանավանդ պրոդուկտիվ յերե-
վակայության աշխատանքները կարող են լինել ակտիվ աշխատանքի
արդյունք :

5. ՊԱՍՍԻՎ ՅԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.

Յերեվակայությունը պասսիվ (կրավորական, ակամա) է կոչվում
այն դեպքում, յերբ առանց անհատի կամքի, նպատակի և վորոշակի
կազմած ծրագրի նախկին փորձը վերարտադրվում է առանց անցյալում
ապրված լինելու գիտակցության և կամ անցյալի փորձը նոր կապակե-
ցություններով և հանդես գալիս, նույնպես առանց ցանկության և
ծրագրի :

Պասսիվ է յերեակայությունն այն ժամանակ, յերբ մեր գիտակե-
ցության մեջ արթնանում են պերսեվերացիայի կամ այլ պատճառով
աշխատի մտապատկերներ, վորոնք չեն կապվում վորոշակի կերպով
մեր անցյալ փորձի վորոշ մոժենտի հետ, կամ հոգնած ժամանակ ան-

կողմում, մութ ունյակի մեջ, քնելուց փոքր ինչ առաջ, մարդու աչքին
յերևում են կիսաստվերային մի առարկա, տարորինակ ժարդկային
դեմք, տարորինակ կենդանի և սկսում են, առանց մեր կամքի, բազմա-
թիվ ձևափոխությունների յենթարկվել (Փորձերը փոխել) բավական
արագ և բավական յերկար ժամանակ : Կան մարդիկ, վորոնք արթնան
ժամանակ կարող են կամովին այսպիսի վիճակներ ստեղծել : Այսպես,
որ. Գյոթեն իր մասին գրում է, վոր նա կարող էր ոչքերը փակել, գր-
յալի մի փոքր ներքե խոնարհել և այնպես անել, վոր ինքը մի ծաղիկ
տեսնի. սրանից հետո արդեն ծաղիկի ձևափոխություններն ակամայից,
առանց նրա ցանկության են տեղի ունենում. այդ ծաղիկը չի պահում
իր սկզբնական ձևը, այլ բացվում է և նրա միջից դուրս են գալիս նոր
ծաղիկներ գունավոր կամ միայն կանաչ տերևներով, սրանք վոչ թե
րնական, այլ Փանտաստիկ ծաղիկներ են. ինքը չի կարող իր ուշադրու-
թյունը ծաղիկների այս կամ այն ձևի վրա կենտրոնացնել, այլ նրանք
իրենք իրենց նույն արագությամբ փոփոխվում են :

Պասսիվ յերեակայությունը հանդես է գալիս վորոշ դեպքերում
նաև ըմբռնումների ժամանակ. զանազան Փորձեր, առարկաներ և գոր-
ծողություններ կարելի յե նկատել ամպերին, վառվող ոջախին, հեռու
գտնվող կամ թույլ լուսավորված առարկաների խառը կույտերին, որա-
տի անհարթություններին կամ ծառի կեղևին նայելիս : Ընտանդո-Դա-
վինչին իր աշակերտներին նկարի համար նյութ վորոնելիս խորհուրդ
էր տալիս լրջությամբ նայել ծառերի կեղևներին : Յերագը նույնպես
պասսիվ յերեակայության արդյունք է :

6. ՅԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԲԸ

Մինչև այժմ ասածները պարզում են, վոր յերեակայության աշ-
խատանքի համար անհրաժեշտ են անցյալի փորձ, հիշողության կարո-
ղություն հետ միասին, մտապատկերների ասոցիացիա, կենտրոնացում
ուշադրություն, մանավանդ ակտիվ յերեվակայության ժամանակ,
զգացմունքների ներկայություն և մանավանդ վերլուծելու (անալիզի) և
համադրելու (սինթեզի) ընդունակություն :

Յերեակայության հիմքը ունի աշխարհն և—ըմբռնումը : Ըմբռն-
ումները մասամբ արդեն ձևափոխվում են վերհիշողական մտապատ-
կերների մեջ, վորոնք նրանց վոչ բացարձակ պատճեններն են : Վերհիշո-
ղական մտապատկերը դեռ մոտ է ունի ըմբռնումին, հիմնված է նրա
վրա, մի յերեսով նրան շատ նման, մյուս յերեսով մի փոքր փոխված,
նա հիշեցնում է դեռ ունի աշխարհի այս կամ այն ինչ կոնկրետ իրը
կամ յերևույթը՝ կապված վորոշ տեղի և ժամանակի հետ :

Յերևակայության մտապատկերն անուղղակի կերպով հիմնվում է քմբոնումների, իսկ ուղղակի մտապատկերների վրա, ավելի ևս ձե-
վափոխվելով, իրականությունից հեռանալով, նա չի ներկայացնում
այս կամ այն ուսուցիչի կամ յերևույթի պատկերը. նա չի տեղավորում
անցյալ փորձի ժամանակի այս կամ այն մոմենտի մեջ, իրականությու-
նը չի տալիս, ինչպես կա, այլ նոր ձևով, նոր կոմբինացիաներով: Նա
իրականությունն ավելի վերամշակված ձևով է տալիս:

Ի՞նչ է հարկադրում մարդուն մտավոր աշխատի կառուցումներ
ստեղծելու. մարդկային կարիքները, ուսուցանողները, գաղթը լու-
սաբանելու անհրաժեշտությունը, իրականությունն ավելի լավ ոգտա-
գործելու հրամայականությունը, իր մտավոր կոնստրուկցիաներից բա-
վարարություն ստանալու պահանջը, կարճ՝ սոցիալական քարոզ կյան-
քը: Յեթև ամեն բան մնար ընթանումներին, յեթև իրականությունն ալ
կերպ պատկերացնելու հնարավորություն չլինելը, այն դեպքում ան-
հնար կլինեյին տեխնիկայի ասպարիզում տեղի ունեցող գյուտերը, գի-
տական թեորիաները, զեղարվեստական ստեղծագործությունները:
Յերևակայությունը ծնվում է կենսական կարիքներից և զարգանում որ
ավելի աճող կարիքների թեթևությունով: Դրա համար ել յերևակա-
յությունը մտավոր մի հիմնական գիտելիքն իսկ չէ, ինչպես յենթադրում են
փոմանք, այլ իրականից բղխող մտավոր մի պրոցես՝ այն եռոյն իրակա-
կանություն վրա աղբւելու համար:

Վորքան մարդ ավելի անդարդացած է և սոցիալական պարզ կյան-
քով է ապրում (վայրենին, յերեխան), այնքան ավելի քմահաճ և իրա-
կանից կարված է նրա յերևակայությունը, այնքան ավելի մտավոր
խաղերի բնույթ ունի այդ պրոցեսը և տեղի յե ունենում յերևակայու-
թյունը ներքին ինքնաբերականության համար (մանկական խաղերը):
Սոցիալական բարդ կյանքը մարդու յերևակայությունը ուսուցիչ հիմքերի
վրա յե դնում, ավելի գործնական—կենսական խնդիրների առաջ կանգ-
նեցնում:

Սոցիալական պայմանները հարկադրում են զանազան դասակարգի
պատկանող մարդկանց ներկա և ապագա կյանքի մասին կաղծելու ու-
րույն պատկերացումներ:

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ըմբռնումն ի՞նչ տեսակ ելքմենտների ասոցիացիա յե:
2. Ինչպի՞սի հոգեկան ապրումն է մտապատկերը և ինչ ստորաբա-
ժամատն է յենթակա:

3. Ինչ նմանություն և տարբերություններ ունեն մտապատկերը և
քմբոնումը:

4. Մտապատկերը մի պարզ վիճակ է, թե՞ մտապատկերային տար-
բերի կոմպլեքս:

5. Բնորոշեցե՞ք տեսողական, լսողական, չարժողական և խոսն
(ընդհանուր) տիպերի առանձնահատկությունները:

6. Ինչով է բացատրվում տիպային առանձնահատկությունը. հոս-
քավոր է մի տիպից մի այլ տիպի անցնելը:

7. Ինչի՞ աղբյուրն է մտապատկերը:

8. Ինչպե՞ս բնորոշել վերհիշումը, ճանաչումը:

9. Ինչպե՞ս բացատրել ծանոթությունից զարգացման առաջանալը:

10. Ի՞նչ բան է ամենգիտան և ի՞նչ բան է պարամենգիտան:

11. Ինչպե՞ս բացատրել տարբերելու գիտակցությունը:

12. Ի՞նչ առանձնահատկություններ ունի յերևակայության մտա-
պատկերը:

13. Ի՞նչ առանձնահատկություններ ունի պրոդուկտիվ յերևակա-
յությունը:

14. Վորո՞նք են ստեղծագործական յերևակայության առանձնա-
հատկությունները:

15. Յերևակայության ժամանակ ինչպիսի են տեղի ունենում մտա-
պատկերների կոմբինացիաները:

16. Նկարագրել ակտիվ և պասսիվ յերևակայության բնորոշ կող-
մերը:

17. Ինչումն է յերևակայության արժեքը:

ԳՐԱՎՈՐ ՊՍՏԱՍԽԱՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԵՐԻՆ

1. Վորոշեցե՞ք, թե դուք մտապատկերային վոր տիպին եք պատկա-
նում (ապացույցներ): Մտապատկերային տիպերի յերևույթն ի նկատի
ունենալով՝ մի բանաստեղծություն ինչպես անգիր անել կտաք աչա-
կերաներին: 2. Համեմատել իրար հետ ճանաչման և վերհիշման յերե-
վույթները: 3. Համեմատել իրար հետ ուսպրողուկտիվ և պրոդուկտիվ
և պասսիվ յերևակայության տեսակները:

ՀՀ Ազգային գրադարան



NL0151929

1950/110


$$\begin{array}{r} 15 \\ \hline 5-16 \end{array}$$